

**ՀԱՅԵՐԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՐԹՆԻ-ԿԱՆԵԹԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(XVIII դ. երկրորդ կես)**

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Արևելյան Վրաստանի քաղաքներում (Թիֆլիս, Գորի, Անանուր, Սղնախ) կար զգալի թվով հայ բնակչություն, որը երկրի տնտեսական կյանքում իր որոշակի տեղն ուներ: Թիֆլիսում ռուսական կառավարության ներկայացուցիչ, ղնդապետ Ս. Բուռնաշևը գրում է, որ տեղի հայերը XVIII դ. 80-ական թվականներին բաժանվում էին հետևյալ զասերի. ազնվականներ, առևտրականներ, արհեստավորներ և երկրագործներ¹: XVIII դ. Թիֆլիսը հիմնականում մանր ապրանքային արտադրության և արհեստագործության կենտրոն էր: Իշխան Ա. Մոուրավովի 1770 թ. վկայությամբ՝ քաղաքում բնակվում են բավական մեծ քանակությամբ արհեստավորներ²: Կապիտան Ն. Յազիկովի ղեկավարությամբ (1770) ևս շեշտված է Թիֆլիսի արհեստավորների բազմաքանակությունը³: Այդ արհեստավորների մեծ մասը հայեր էին, որոնք միավորված էին համաքաղաքային մեծ ֆեոդալական շահերի հայ վաճառականներն արտահանում էին Պարսկաստան, Թուրքիա, Ռուսաստան և այլուր: Գնդապետ Ս. Բուռնաշևի վկայությամբ՝ Թիֆլիսի հայ վաճառականները «առևտուր են անում Պարսկաստանի և Հնդկաստանի հետ՝ Ռուսաստանից բերած ոչ մեծ քանակով ապրանքներով, իսկ այնտեղից՝ (Պարսկաստանից և Հնդկաստանից — Վ. Մ.) քարավաններով ստանում են մետաքսյա, բամբակյա հնդկական և պարսկական գործվածքեղեն, կերպասներ, ինչպես նաև ճենապակյա սպասեղեն: Ներառյալ աշխույժ առևտուր են անում լեռնականների և պարսկահայատակ մերձակա հարևանների հետ՝ արհեստագործական ապրանքներով, այսինքն՝ պղնձե սպասեղենով, բամբակյա գաջված, ներկված և ճերմակ գործվածքեղենով, ձիու սանձով և թամբով, սրերով և դաշույններով, երկաթյա մանր իրերով, հագուստեղենով, գլխարկներով և կոշիկեղենով, քանի որ կովկասյան գրեթե բոլոր ժողովուրդները և դրացի մյուս ժողովուրդները իրենց նման կարիքները հոգալու համար օգտվում են Թիֆլիսաբնակ հայերի աշխատասիրությունից: Թիֆլիսում կա թանկարժեք և արհեստագործական ապրանքների, նպարեղենի մոտ 500 խանութ»⁴:

¹ С. Д. Бурнашев, Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, Тифлис, 1896, стр. 1.

² А. Цагарели, Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. I, СПб., 1891, стр. 217.

³ Նույն տեղում, էջ 188:

⁴ С. Д. Бурнашев, նշվ. աշխ., էջ 2—3:

Գործիում, Սղնախում, Անանուրում և այլուր բնակվող հայ վաճառականները ևս մեկնում էին Ռուսաստան, Պարսկաստան, Թուրքիա և Հնդկաստան ու այնտեղից կանխիկ դրամով ապրանք գնում⁵։

1812 թ. կաղմված պաշտոնական զեկուցագրի համաձայն՝ Թիֆլիսը կա-
նոնավոր առևտրական կապեր ուներ Կարինի, Բայազետի, Ախալցխիսի, Կարսի,
Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Երևանի, Խոյի, Թավրիզի, Նախիջևանի,
Թեհրանի, ինչպես նաև Բաղդադի, Սպահանի, Բենդերբուշիի և այլ քաղաք-
ների հետ⁶։ Այսպես, օրինակ, 1783 թ. դեկտեմբերի 25-ին կաթողիկոս Ղուկաս
Կարենցին Տփղիսի մելիք-մամասախլիս Ավետիք Բեհրուջյանին գրում է, որ
ինքը կատարել է վերջինիս խնդրանքը և թուղթ է գրել Բաղդադ, որպեսզի
տեղի հայերը օժանդակեն և հովանավորեն Ավետիքի եղբոր որդուն՝ Իվանին,
որն առևտրական գործերով գնացել է «ի Բաղդատ և ի Շամա»⁷։ Նույն 1783 թ.
հունվարին նա Բասրայում գտնվող Ստեփանոսին և Բեթղեհմյան Հովհաննեսին
գրում է, որ «թիֆլիզեցի Աֆթանդիլի որդի Բեջան անուամբ այր մի, որ շատ
ժամանակ յայդ կողմունսդ է եղեալ, զոր և զուր թերևս ճանաչիցեալ Իսկ այժ-
մոյս է Թիֆլիզ, Սոյն Բեջանս եկն ի սուրբ աթոռս և առ մեզ, և իւր յօժար
կամօքն ուխտեաց և ի ներկայութեամբ արհիեպիսկոպոսաց սրբոյ աթոռոյս
և առաջի մեր զրեաց զկտակ, զի իւր բոլոր կտյից և ընչից տասնէն մէկն
սրբոյ աթոռոյս լիցի։ Եւ յետ այսորիկ, ղթիֆլիզեցի Գասպարի որդի պարոն
Կարապետն վէթիլ արարին ինքեան հաստատուն գրով, որ գայ յայդ (Բասրա-
յի—Վ. Մ.) կողմունսդ, և ուր որ առնելիք դոն իւրեան, առնուցու։ Եւ նախասլես
չորս հարիւր թուման նոյն վէթիլ պարոն Կարապետն վեր առնուցու, զի ինքն
Բեջանն տալուց է նմա»⁸։ Այս վավերագիրը ևս վկայում է Հնդկաստանի հետ
թիֆլիսաբնակ հայերի ունեցած առևտրական կապերի մասին։ Նույն խաղա-
կենց Գասպարի որդի Կարապետը, որն առևտրական գործերով մեկնում էր
Հնդկաստան, 1790 թ. մարտի 21-ի իր լիազորագրի համաձայն մինչև վերա-
դառնալն իր ունեցվածքի լիազոր է կարգում իր փեսա Դեմետրիին⁹։

XVIII դ. վերջերին կաղմված մի վավերագրի համաձայն թիֆլիսեցի վա-
ճառական խանդակենց Դիմիտրին Հնդկաստանից 1400 թումանի (14.000 ռ.)
ձոթեղեն և մի քանի տասնյակ հազար ռուբլու ակնեղեն է բերել։

1800-ական թվականների մի պաշտոնական զեկուցագրի վկայությամբ
Թիֆլիսում վրաստանի հայերը նշանակալից առևտուր էին անում¹⁰։ Ուշագրավ
է, որ քաղաքի վաճառականների համաքարույթունը մրցակցությունից խուսա-
փելու նպատակով օտարերկրացի վաճառականներին պարտադրում էր իրենց
ապրանքն ամբողջական կամ հակերով վաճառել։ 1808 թ. կաղմված վրացա-
կան մաքսալին սակագնի համաձայն հայ առևտրականները Հնդկաստանից
ներմուծում էին ակնեղեն, բրդյա և մետաքսյա գործվածքներ, ներկեր, պող-

⁵ Յ. Յ. Պաշտոնյան, Սախառնոց և Սախառնոցի զեկուցագրերը XIX—
XX ս. ս., տծ., 1949, Ծ. I, թ. 110—111.

⁶ «Акты Кавказской археологической комиссии» (այսուհետև՝ АКАК), т. V,
док. № 396.

⁷ Մ. Մարտիրոսյանի անվան Մատենադարան, ձեռ. № 2803, թ. 193ա.

⁸ Ձեռ. № 3738, թ. 242բ.

⁹ Վրաց. ՍՍՀ ԳԱ ակադ. Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի գիտահետազոտական ինստի-
տուտ, ֆ. Hd, վավ. № 7752.

¹⁰ АКАК, т. V, док. № 396, стр. 332—340.

(դրամ—վ. Մ.) և տալ ձեզ, դրանով իսկ հատուցել ձեր կրած վնասը և ձեզ զերծ պահել վնասից, իշխողների և երկրի օժանդակությամբ:

Գրվեց քաղաքում ապրիլի 1-ին, քրոնիկոնի 448 թ. [1760 թ.]»²⁰:

Մեզ է հասել նաև Հերակլ II-ի և նրա հոր՝ Թեհմուրազ II-ի պարտավորադիրը՝ Պետերբուրգից վերադառնալուց հետո հիշյալ անձանց ծախսերը հատուցելու մասին²¹, լ'ստ երևույթին, վրաց արքունիքում ընդունված կարգի համաձայն թաղավորին կամ արքայազնին օտար երկիր ուղեկցելու և նրանց նյութական հոգալու պարտականությունը դրվում էր թիֆլիսաբնակ հայ ունևոր վաճառականների վրա: Այսպես, օրինակ, երբ 1771 թ. դարձյալ քաղաքական ակնկալություններով Ռուսաստան է մեկնում արքայազն Լեվանը, այդ պարտականությունը դրվում է Ջանդագենց Ղվթիսավարի և քաղաքի երեք այլ հայազգի բնիկությանների վրա²²:

Ինչպես արդեն նշվեց, XVIII դ. երկրորդ կեսին Դարիալի կիրճով դեպի Ռուսաստան տանող ճանապարհի բացումը աշխուժացրեց առևտրական կապերը Ռուսաստանի հետ, որոնց մասնակից դարձան նաև Գորիի, Դուշեթի և Անանուրի հայ վաճառականները: Այսպես, 1783 թ. մարտի 28-ին Մոզգոկում թիֆլիսեցի Տեր Ասատուրի որդի Առաքելը և դուշեթցի Ազիզի որդի Հակոբը պայմանավորվում են իրենց դրամագլուխը միավորել և ապրանք տանել Թիֆլիս՝ վաճառելու:

Թիֆլիսի հայ վաճառականները մասնակցում էին նաև ռուս-պարսկական առևտրին: Այդ մասին է վկայում օրինակ այն, որ 1775 թ. հոկտեմբերի սկզբներին Դերբենդի մոտ խորտակված նավի վրա, որը պատկանում էր ռուս վաճառական Գավրիլ Սկվորցովին, գտնվում էին թիֆլիսեցի հայ վաճառականներ, որոնց ինչը յուրացնում է Դերբենդի Ֆեխտ-Ալի խանը: Հերակլ II-ը 1775—1776 թթ. դիմում է Եկատերինա I-ի, Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայի պրեզիդենտ Ն. Պանինի և այլոց միջնորդությանը՝ նավաբեկության ենթարկված Թիֆլիսի հայ վաճառականների ինչը նրանց ընտանիքներին վերադարձնելու համար²³, «Այն հանգամանքը, որ Հերակլ Երկրորդ արքան որոշել էր հայցել Եկատերինա Երկրորդ կայսրուհու օժանդակությունը՝ ապրանքները վերադարձնելու խնդրում, հիմք է տալիս ենթադրելու ապրանքների մեծ՝ (հազարավոր ռուբլիների հասնող) արժեքի մասին»²⁴: 1788 թ. փետրվարի 14-ին Մոզգոկի պարետ վ. Ֆրամգուլդին Շերգիլենց Փարասդանի որդի Հովհաննեսի հղած դիմումում մասնավորապես նշված էր, որ լեռնականները կողոպտել էին 10 հազար ռ. արժողությամբ ապրանք²⁵: Ուշագրավ է, որ Հերակլ II-ը ևս միջամտել է այդ գործին և Կովկասի լեռնականներից պահանջել վերադարձնել կողոպտած ապրանքները:

²⁰ Վրաց. ՍՄՇ ԳԱ ակադ. Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, ֆ. Hd, վավ. № 13114:

²¹ Նույն տեղում, 1760, գ. 1, թ. 22:

²² Նույն տեղում, ֆ. Hd, վավ. № 13710:

²³ ՌԱՔԱ, ֆոնդ՝ Ռուսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ, 1776—1777 թթ., գ. 478, թթ. 76—77, 93—99:

²⁴ В. Н. Гамрекели, Торговые связи Восточной Грузии с Северным Кавказом в XVIII в., Тбилиси, 1968, стр. 70—71.

²⁵ В. Н. Гамрекели, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом, Тбилиси, 1968, стр. 217.

Մոզդոկ ժամանած և այնտեղից մեկնած անձանց ցուցակներից (1780 թ. մայիս) երևում է, որ Թիֆլիսի հայ վաճառականները առևտրական կապեր ունեին նաև Աստրախանի հետ: Յուցակը վկայում է, որ «Թիֆլիսի բնակիչներ Եսայի Հարությունովը, Պետրոս Բաղդասարովը և Հովսեփի Հարությունովը երկու վարձած սայլով ապրանք են բերել, Մոզդոկում էլ 100 աղվեսի մորթի գնել և մտադիր են եղել Ղզլարով Աստրախան գնալ»²⁶: Այդ ցուցակում հիշատակվում են նաև բազմաթիվ այլ Թիֆլիսեցի հայ վաճառականներ, որոնք Մոզդոկ-Ղզլար-Աստրախան առևտրական ուղիով հաճախ էին երթևեկում²⁷:

1785 թ. հոկտեմբերին Հերակլ II-ը Թիֆլիսեցի Գրիգոր Քեթխուդյանին ուղարկում է Աստրախան՝ Պավել Պոտյոմկինի մոտ, որպեսզի վերջինս Գրիգոր Քեթխուդյանին թույլատրի Աստրախանից Բարվի վրայով պարբերաբար ևրկաթ առաքել Թիֆլիս՝ հրետանու և այլ կարիքները հոգալու համար²⁸:

Աստրախանում վրացահայ վաճառականների առևտրական աշխույժ շորժունեության մասին է վկայում նաև հետևյալ փաստը. 1792 թ. թիֆլիսահայ վաճառականներ Մղդսենց Զուրաբը, Մուրագենց Զաալը, Բոխորենց Գևորգը, Մանդինենց Դաբրիելը և Ռոստեմանը, նավով Աստրախանից մեկնելիս փորձել են տանել մոտ 20.000 ռ. (ոսկով): Այդ դրամը Աստրախանի նավահանգստային մաքսատունը բռնագրավել է, քանի որ ոսկե դրամի արտահանումը Ռուսաստանից արգելված էր: Հերակլ II-ը և թագուհի Դարեջանը 1792 թ. սեպտեմբերի 26-ի և 29-ի նամակներով արտաքին գործերի կոլեգիայի պրեզիդենտ Ալեքսանդր Բեգբորովիչին և Նկատերինա II-ին խնդրել են բռնագրաված ոսկե դրամը վերադարձնել հայ վաճառականներին²⁹: Այդ խնդրանքը հարգվել է:

Այն փաստը, որ Հերակլ II-ը և Դարեջան թագուհին հովանավորում էին իշխյալ հայ վաճառականներին հիմք է տալիս կարծելու, որ վերջիններս սերտ կապերի մեջ են եղել վրաց արքունիքի հետ և խոշոր արտաքին առևտրական գործարքներ են կատարել:

Իրավացի է վրաց պատմաբան Մ. Ի. Տիկաձեն, որ «Անդրկովկասի և մասնավորապես Վրաստանի արտաքին առևտուրը XVI—XVIII դարերում գրեթե ամբողջովին հայ վաճառականների ձեռքին էր գտնվում», և որ «Վրաստանում բնակվող հայ վաճառականները պահպանել էին իրենց ազգային լեզուն և լուսավորչական կրոնը»³⁰:

Այսպիսով, բերված փաստերը վկայում են, որ Արևելյան Վրաստանի քաղաքներում բնակվող հայ արհեստավորները և վաճառականները XVIII դ. երկրորդ կեսին զգալի մասնակցություն էին ցուցաբերում երկրի տնտեսության զարգացմանը:

²⁶ Նույն տեղում, էջ 222:

²⁷ Նույն տեղում, էջ 222—228: Ուշադրության արժանի է նաև այն, որ Իմերեթիայում բնակվող հայերը ես մասնակցում էին ռուս-վրացական առևտրատնտեսական կապերին (նույն տեղում, էջ 251, 253):

²⁸ Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ, ֆ. 52, ց. 194, գ. 20, թ. 17:

²⁹ ՌԱՔԱ, ֆոնդ՝ Ռուսաստանի հարաբերությունները Վրաստանի հետ, ց. 110/2, 1774—1807 թթ., դ. 18, թթ. 167—171:

³⁰ Ծ. Ուշաք, «Միջնադարյան Վրաստանի խնամքը ժողովրդի նկատմամբ», Երևան, 1970, 83, 219, 223:

ТОРГОВАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯН
В КАРТЛ-КАХЕТИНСКОМ ЦАРСТВЕ
(вторая половина XVIII в.)

В. М. МАРТИРОСЯН

Резюме

Во второй половине XVIII в. в городах Картл-Кахетинского царства (Тбилиси, Гори, Сыгнахи, Ананури, Душети) проживало много армян, пользовавшихся покровительством грузинских правителей и игравших заметную роль в экономической жизни страны. Продукция армянских ремесленников шла не только на удовлетворение потребностей внутреннего рынка, но и вывозилась армянскими купцами за пределы страны. Весомая часть внешней торговли Восточной Грузии находилась в руках армянских купцов. Картл-Кахетинское царство поддерживало торговые связи с Северным Кавказом, Персией, Турцией, Сирией, Индией и особенно с Россией — городами Астраханью и Москвой через новую дорогу, проходящую по Дарьяльскому ущелью.